Արձանագրություն N 4
ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-Ն ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 հունվարի 2023թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահին փոխարինող՝ Ս. Ասրյանը

Հանձնաժողովի անդամներ Ս. Նազարյանը, Ա. Մխիթարյանը և Տ. Վարդանյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Բանակցությունների վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Թալինի 1 պոմպակայանի (Արագածավան բնակավայր) վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-**Ն** ծածկագրով ընթացակարգ 23.01.2023թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած գնի նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցում էր «ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի աշխատակից Տ. Այվազյանը:

Ընթացակարգի մասնակից <<ՋԻՆՋ>> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ստացվել է հաղորդագրություն, որ ընկերության գնային առաջարկը մնում է անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովի նախագահին փոխարինող Ս. Ասրյանը բանակցությունների մասնակիցներին ներկայացրեց «ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը:

Բանակցությունների համար ներկա մասնակցի կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով տրամադրվել է 3 (երեք) րոպե ժամանակ (որի ընթացքում կարող են լինել գնի իջեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից): Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով փոխանցվեց գնահատող հանձնաժողովի նախագահին, որն էլ համարվեց վերջնական:

Բանակցությունների ավարտին մասնակցի կողմից առաջարկած գին.

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
	Չափաբաժին 1 Թալինի 1 պոմպակայանի (Արագածավան բնակավայր) վերականգնման աշխատանքների Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում խորհրդատվական ծառայություններ			
1	«ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	12 950 000	2 590 000	15 540 000

Հանձնաժողովի որոշումը

Ամփոփելով հայտերի գնահատման և բանակցությունների արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-23/2-**Ն** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից համարել «ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ -ին,

2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:
Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Ս. Ասրյան

անդամներ _____ Ս. Նազարյան

_____ Ա. Մխիթարյան

_____ Տ. Վարդանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան